դանդաղ առաջ կ'երթայ։ Նշանաւոր է 'ի սմա փա-
ռագմբէթ Խան-Ճամին, 'ի Թաթարաց մնացեալ մըզ-
կիթն. սակաւաթիւ են հոս ազգայինք, էջմիածնա-
կան Հայք ունին վայելուչ եկեղեցի, իսկ Հայ-կա-
թոլիկք մատուռ մի փոքրիկ։ Նաւն ժամ մի հոս
մնալէն վերջը, յառաջ վարեց ընթացքը դէպ յՕտես-
սա, և 18 ժամ միակերպ ընթանալով՝ միւս կէս
օր՝ ժամը 12 ին հասանք յՕտեսսա։

Բ

ՅՕՏԵՍՍԱՅԷ ՄԻՆՉԵՒ ՅԿԱՄԵՆԻՑ

Օտեսսա՝ 'ի Ռուսաց Հարաւային գեղեցկուհի (южная красавица) վերաձայնեալ, զի հարաւային և նոր Ռուսիոյ մէջ նմանն չկայ, նոյնպէս ևս ընդ համօրէն Ռուսաստան, յետ մայրաքաղաքին Պե-
տերբուրգի՝ բարեչէն քաղաքաց առաջինն է՝ վաճա-
ռաշահութեամբ ծաղկած։ Իննսուն տարի առաջ Օտեսսայի տեղ (1794) Հաճի-Պէյ անունով փոքրիկ գիւղ և ամրոց մի կար, ուսկից՝ 'ի Լեհաստանէ և 'ի Ռուսաստանէ աւարն և կողոպուտ 'ի Տաճկաստան կ'անցնէր. զի Հաճի-Պէյ՝ Տաճկաց ամրոց էր։ Այժմ այդ փոքր գիւղին և ամրոցին տեղ կանգուն կայ 250,000 բնակչաք փառաւոր քաղաք մի, որ նախանձորդ է Փրանկաց մայրաքաղաքին, յար և նման սալայատակով, ջրոց ագուգաներով ամէն կողմ, մարգերով, շատրուաններով, մեծագործ ճե-
մելեաք. ունի իրեն արքունի պալատը (palais royal), համալսարան, թանգարան, հնագիտաց ընկերութիւն, փառաւոր շէնքեր, եկեղեցիք, և այլն։